ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

-123-
26.04.2019 թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Պ-Ն ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան
Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ղեկավարի թիվ 15 , 16 որոշումները : / ճշտված տարբերակը /

Առդիր ՝ 2 թերթ :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԱԼՈՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնք,
գ. Գոգարան , հեռ. 0255 6 06 04

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » Ապրիլի 2019 թվականի N15

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՈՆԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ս. Գասպարյանի 2019 թ. ապրիլի 12 –ի հայտը , ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թ . հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ և 6-րդ կետերով՝

Որոշեցի .

1.Գոգարան համայնքի 1-ին փողոց , թիվ 14 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր՝ Ս. Գասպարյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ /ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն , 2019 թվականի ժամանակահատվածի համար:

2.Եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը :

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

2019 թ. Ապրիլի 12

գ.Գոգարան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք , գ. Գոգարան , հեռ. 0255 6 06 04

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 16
« 17» Ապրիլի 2019 թ .

06-030-0033-0004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ , «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության / օգտագործման / իրավունքի գրանցման թիվ 1437671 վկայականը և Սուսաննա Սահակյանի դիմումը`

*որոշում եմ.*

1.Ս. Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող Գոգարան համայնքի 7-րդ փողոցի վրա գտնվող 06-030-0033-0004 կադաստրային ծածկագրով 0.183 հա մակերեսով տնամերձ հողամասին , դրա վրա գտնվող 06-030-0033-0004-001 կադաստրային ծածկագրով 76.4 քառ. մ մակերեսով տանը տրամադրել « գ. Գոգարան , 7-րդ փողոց , թիվ 6 » հասցեն :

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ԳԱԼՈՅԱՆ